Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր № Կ-08/09

ք. Երևան «13» 08 2019 թ.

ՀՀ ԱՆ «ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ և ԱՅՐՎԱՃՔՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի /Կատարող/ ի դեմս տնօրեն Գ.Սիմոնյան, մի կողմից և մյուս կողմից

/հիմնարկության, ձեռնարկության, կազմակերպության անվանումը/

հետագայում /Պատվիրատու/ ի դեմս

/պաշտոն, անուն, ազգանուն, հայրանուն/

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. «Պատվիրատուն» հանձնարարում է, իսկ «Կատարողը» հանձն է առնում, համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ ՀՕ–42 Օրենքի, 04-03-1996, ՀՀ Կառավարության որոշումների N 1489-Ն, N 1219-Ն 18.08.06, գործող նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի և իր կանոնադրության կատարել հետևյալ աշխատանքները՝

1.1.1. Ռենտգեն, համակարգչային շերտագրման և ռադիոիզոտոպային ախտորոշիչ կաբինետների՝ ստացիոնար, շարժական և անհատական միջոցների դոզաչափումներ;

1.1.2. Ռենտգեն և համակարգչային շերտագրման սարքավորումների տեխնիկական վիճակի ուսումնասիրմանն ուղղված դոզաչափումներ, հաշվարկ և անալիզ (հաշվարկը կատարելիս որպես միավոր ընդունվում է մեկ ռենտգեն խողովակը);

1.1.3. Պացիենտների ճառագայթահարման դոզաների հաշվարկ տարբեր ախտորոշիչ հետազոտությունների ժամանակ;

1.1.4. Ճառագայթային աղբյուրների կամ ռենտգեն սարքերի հետ շփում ունեցող բժշկական անձնակազմի անհատական դոզաների եռամսյակային և տարեկան մշտադիտարկում:

1.1.5. Ռենտգեն և իզոտոպային կաբինետների տեխնիկական անձնագրավորում:

1.2 Սույն պայմանագրով կատարվող աշխատանքներն իրականացվում են համաձայն երկկողմանի համաձայնեցված օրացուցային պլանի:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու համար «Պատվիրատուն» պարտավոր է «Կատարողին» ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և ապահովել պայմաններ աշխատանքները կատարելու համար:

1.4 Պայմանագիրն ուժի մեջ է 13. 08 2019թ., մինչև 13. 08 2020թ.

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՒՄԱՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ

2.1 Աշխատանքների համար վճարումները իրականացվում են համաձայն ՀՀ ԱՆ կողմից հաստատված Ճառագայթային բժշկության և այրվագքների ԳԿ, ՓԲԸ-ի տնօրենի կողմից հաստատված գնացուցակի /պայմանագիր հավելված 1/:

2.2 Սույն պայմանագրով նախատեսված 1.1 կետի աշխատանքների վճարումները կկատարվեն համաձայն հաշիվ-ապրանքագրերի:

2.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսելու օրվանից, «Պատվիրատուն» պարտավոր է վճարել կատարված աշխատանքի համար 10 օրվա ընթացքում, փոխանցելով գումարը «Կատարողի» հ/հ-ին:

2.4 Վերջնական փաստաթղթերը «Պատվիրատուին» տրվում են վճարումները լրիվ կատարելուց հետո:

2.5 «Պատվիրատուի» կողմից ռենտգեն կաբինետի կամ սարքավորման ձևափոխման, վերանորոգման կամ կարգավորման աշխատանքներ կատարելուց հետո, «Կատարողի» լրացուցիչ աշխատանքները վճարվում են ըստ նոր հաշիվ-ապրանքագրի:

Scanned by CamScanner

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրով կատարված աշխատանքների ընդունում-հանձնումը կատարվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ /կատարողական ակտ, արձանագրություն/:
3.2 Անհատական դոզաչափական հսկողություն իրականացվում է այն աշխատակիցների նկատմամբ, որոնք ենթարկվում են ռենտգենյան ճառագայթման, կամ շփվում են ռադիոակտիվ նյութերի հետ:
3.3 Անհատական դոզաչափերի հավաքման և բաժանման կազմակերպումը կատարվում է Պատվիրատուի կողմից հրամանով նշանակված ճառագայթային անվտանգության պատասխանատու անձի կողմից:
3.4. Պատվիրատուն պատասխանատու է աշխատակիցներին տրվող անհատական դոզաչափերի ամբողջականության համար: Դոզաչափերը շարքից դուրս են գալիս բացելու կամ թրջվելու դեպքում, հետևաբար նրանց բացման կամ կորստի դեպքում Պատվիրատուն պարտավորվում է փոխհատուցել համապատասխան սահմանված գումարի չափով, որը կազմում է 15.000 դրամ:
3.5. Անհատական դոզաչափերը փոխանակվելով երամսյակը մեկ անգամ:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են անմիջական բանակցությունների միջոցով: Այն չլուծվելու դեպքում վեճի կարգավորումը կկատարվի գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.2 Պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Շահագրգիռ կողմն այդ մասին մյուս կողմին գրավոր տեղեկացնում է 10 օր առաջ:

5.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չեն կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներից են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը և այլն:
Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից և կողմերին տրվում է մեկական օրինակ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

_____

_____

_____

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

«Կատարող»	«Պատվիրատու»
0054 ք. Երևան, Դավիթաշեն փ/ա 25	Հասցե՝
ՀՀ ԱՆ « Ճառագայթային բժշկության	Հիմնարկության անվանումը
և այրվածքների ԳԿ » ՓԲԸ	
Հ/հ 163028102081	Հ/հ 22008514032290000
հվհհ 01401336	Հվհհ 08417306
Շահումյանի Հայէկոնոմբանկ	Բանկ
Գ.Սիմոնյան	Տնօրեն՝
_____	_____

Scanned by CamScanner